


# ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՆՈՅՆՄԲԵՐ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԽԱ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	ԷԶ
1. Հայրապետական Քերթուած . — Իւր Ուխտ Թարգեի Վանուց .	321
2. Կեանք Յիսուսի . — Մասն Ը .	327
3. Քարոզ . — Ե. Կիւրակե զկնի Վարդապետի	334
4. Ապստարզան կամ Անուսնայուծութիւն .	340
5. Թղթակցութիւն . — Նախկ Լօնդօնէն .	348
Նախկ Զմիւռնիայէն .	350
6. Մատենախօսարան .	351

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն  
սեղի համար սարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,  
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ թղթասարաւ :  
Տանկաստանի քաղաքաց մէջ ձեռքէ կը ծախուի  
հասը՝ Երկու (2) Դանիէկանի :

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան  
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել  
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

**ARMENIAN RECTORY,**

**Upper Brook Street,**


**MANCHESTER.**

# ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԹԻԻ 21 ԵՐԿՐՈՐԴՏԱՐԻ ՆՈՑԵՄԲԵՐ 1901



## ԻՄ ՈՒԽՏ ԹԱԴԷԻ ՎԱՆՈՒՑ

ՇՆՈՀԱԳՐԵԱՑ

Ն. Վ. Օ. ՏԵՐՏԵՐՄԿՐՏԻՉ Ա.  
ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

« Հայրասունկ այգւոյն հրեղէն պարիսպ եւ բարձր աւարակ ,  
ոսկեղէն բաժակ եւ ծիր մատուակ , հայաստանայց հայր հոգեւոր  
բարդուղիսէնս եւ թաղէս . բարեխօս լեռու առ սէր . » — Շարական :

**Ո**՞ տայր ինձ թեւ , թեւ արժըւոյ .  
Որ թըռչէի եւ երթայի  
Ես ի յԱրտազ եւ Շաւարշան ,  
Սուրբ Թաղէի վանք հասնէի .  
Ուր վեհապանն տաճարին մէջ  
Հանգչին ոսկեւրք սուրբ Թաղէի ,  
Եւ մօտ վանուց մի ասպարէզ  
Կայ մի մատուռ փոքրիկ անշուք ,  
Անդ կայ տապան հանգըստարան .  
Սուրբ նահատակ կուռիս Սանդուխտ :

Ես ուխ ունիմ, ուխտս ի վազուց .  
 Ո՛հ, չըկարեմ կատարել ուխտս ,  
 Ես ծերացել էմ, ծերացել :  
 Վասպուրական Արծուին երբեմն  
 Այլ եւս թեւաթափ է եղել :  
 Ես կաշկանդուել եմ, կաշկանդուել ,  
 Առանց կապի եւ՝ չըլլթայի .  
 Հողածուլթիւն հողիս պատեր :

Որ խաչակիր ուխտադիր է ,  
 Միթէ կարէ՞ նա կաշկանդիլ .  
 Թէ կաշկանդի մարմին տրկար  
 Հողին եւ միտք թըռչին ազատ :

Թըռի՛ր հողի իմ սիրավառ ,  
 Սլացիր իջիւր Թաղէի վանք ,  
 Մըտիր ի մութ անլոյս տաճար .  
 Վառէ քո մոմ, որ դու տեսնաս ,  
 Ու՛ր է Տապան մեր Թաղէին ,  
 Հայոց Նախկին Լուսաւորչին :  
 Չոքիր ի ծունկ եւ աղօթէ .  
 Թափէ արտասուք վէր տապանին ,  
 Դու բարեխօս բըռնէ Թաղէն  
 Վասըն Հայոց մեր աշխարհին .  
 Եւ շարչարուած ժողովուրդին :  
 Համբուրելով այն սուրբ շիրիմ ,  
 Ա՛ռ քո փափազըդ անձկալից :

Սուրբ տապանէն ձայն մի ելաւ .  
 Չայն բողոք էր իբաւացի ,  
 Եւ սըրտառուչ դառըն գանգատ ,  
 Թաղէն խօսեց գերեզմանէն .  
 Հարցուց ինձ բան , թէ « Ո՞վ ես դու . »  
 Ասի « Հայոց Հայրիկն եմ ես ,  
 Եւ անարժան Կաթուղիկոս  
 Համայն ազգին մեր Արամեան .  
 Սուրբ Աթոռիդ Աթոռակալ : »

Ասաց Թաղէն թէ՛ « Առաքեալ  
 Աշխարիս վէրէն Աթոռ ունի՞ . »

Ունիմք աթոռ միայն յերկինս ,  
 Զոր խոստացեր է մեր Փրկիչ .  
 Ո՞վ է հնարեր այդ օտար բան :  
 Մի՞թէ այսպէս ուսոյց Գրիստոս .  
 Աթոռ գնել Մայրաքաղաք  
 Անչարժ նըստիլ վէր Աթոռին .  
 Եւ գահերուն չափ բարձրանալ ,  
 Մերթ եւս ձրգտիլ այնչափ յառաջ .  
 Մինչև ի Սիս եւ յԱղթամար .  
 Տիրապետել այլոց վիճակ .  
 Ինչպէս գըրէ առ երեցունս  
 Երեցազոյն Պետրոս եղբայր :  
 Մեր հոգեւոր խօնարհ պաշտօն .  
 Ընդարձակել զերթ պետութիւն :  
 Ի Գրիստոսէն չառինք պատուէր ,  
 Աշխարհավար լինել հօտին .  
 Այլ սոսկ միայն Աւետարան  
 է մեր քարոզ եւ մեր պաշտօն .  
 Եւ Գրիստոսի Եկեղեցւոյն  
 Պարզ հոգեւոր տընտեսութիւն :  
 Լինել հովիւ քաջ եւ արթուն  
 Հըսկել հօտին հաւատացեալ :»

« Եւ ի՞նչ է այն Աթոռ , Աթոռ ,  
 Եւ Մայր Աթոռ ,  
 Վեհափա՛ն եւ Վեհարա՛ն .  
 Էջմիածի՛ն , Էջմիածի՛ն .  
 Լուսաւորի՛չ . Լուսաւորի՛չ .  
 Իսկ Թաղէին համար ո՞չ ինչ :  
 Ուստի՞ էր լոյս Լուսաւորչին :  
 Լոյս ծագեցաւ յերուսաղէմ .  
 Ես լոյս առի լոյս Յիսուսէն  
 Եւ լոյս տըւի Լուսաւորչին ,  
 Մինչ նա անլոյս զեռ մանուկ էր .  
 Լոյս ընդունեց ի Կեսարեայ .  
 Եւ կըրթեցաւ սուրբ հաւատով .  
 Ուր Առաքեալ էի արդէն .  
 Գարոզելով Աւետարան  
 Ես լոյս տըւի Հեթանոսին :  
 Թէ Թաղէոս եւ թէ Գրիգոր

Խոնարհ ծառայք եմք Յիսուսին .  
 Ձի ասաց նա թէ առանց իմ ,  
 Չկարէք առնել դուք և ոչ ինչ :  
 Ես չեմ ժըխտեր թէ Գրիգորիս  
 Մեծազատակ եղեւ քան զիս ,  
 Ձեր Հայրենիք լուսաւորեց :»

« Սուրբ Սաղիմայ Սիօն լեռնէն  
 Ելայ եկայ ես ձեր երկիր .  
 Խաչի հարօր ես հետս առի  
 Բարգուղիմէն էր իմ ընկեր .  
 Ձոյգ ամոլներըս լըծուելով  
 Մեք հերկեցենք Հայոց երկիր ,  
 Քարոզեցինք Աւետարան ,  
 Եւ ցանեցինք սերմըն Բանին ,  
 Փոխան ջրոց դրախտին դետոց  
 Ոռոզեցինք մեր արիւնով :»

« Աստուած հանեց Գրիգոր մըշակ .  
 Որ աճեցոյց իմ ցանած սերմ :  
 Քաւ թէ նախանձ ունի Թաղէն :  
 Բայց դու ընդէ՞ր , ով ազգ Հայոց ,  
 Ձիս մոռացել ես մոռացել :  
 Էջմիածին չէն ու պայծառ ,  
 Թաղէի վանք աւեր դարձել .  
 Ոչ չինարար , ոչ վանահայր ,  
 Ոչ ժամ ասող , ոչ պատարագ .  
 Ոչ միաբան տօնակատար ,  
 Ոչ ուխտաւորք զան Չերմեռանդ :»

« Էջմիածին ջահեր վառին ,  
 Իսկ իմ տաճար ճրրագ չունի ,  
 Գերեզմանիս կանթեղ չիջած .  
 Չըկայ լուսրար , որ վառէ զայն .  
 Լոյս տըլի քել , ով ազգ Հայոց .  
 Դու իմ տաճար խաւա՞ր թողուս .  
 Տաճարն իմ չէ , Աստուծոյն է ,  
 Ձոր կանգնել են նախնի սուրբ Հարք ,  
 Աստուծոյ տուն մնացել անտէր ,  
 Եւ աղաւնիք բոյն են դրրել :  
 Եթէ մընայ այսպէս անչէն ,

Ո՛հ , յիշատակն իմ կորընչի .  
Եւ Հայք մոռանան ըզթաղէն : »

« Գընա , ո՛վ դու Հայոց Հայրիկ ,  
Տար իմ բողոք Հայոց ազգին .  
Պատմէ ինչ որ աչքով տեսար ,  
Իմ Թաղէի վանուց վիճակ :  
Ես խրոովեալ եմ խրոովեալ ,  
Մի վըրդովեր իմ գերեզման : »

Վըրդովեցաւ եւ իմ հոգիս  
Եւ դառնապէս լացի ուժգին .  
Ես փարեցայ սուրբ տապանին  
Համբուրեցի , համբուրեցի ,  
Ելայ տըխուր ի տաճարէն :

Թողի ապա Թաղէի վանք  
Գնացի մըտայ փոքրիկ մատուռ ,  
Սուրբ նահատակ Կուսին Սանդուխտ .  
Որ ի միջի վըկայուհեաց  
Նա առաջին սուրբ վըկայն է .  
Ձոր Սանատրուկ ամբարիշտ հայր  
Շըղթայակապ մատնեց ի բանդ :

Ասէն թէ մի պատեհ ժամու ,  
Գնացել Թաղէն սանիկին այց ,  
Համբուրելով համբուրել է  
Կուսին շըղթայն սուրբ չըթուներով ,  
Խրախոյս տըւեր Սանդուխտ կուսին .  
Աւետէր է հարսնութեան օր : —

« Ես հարսնաւէր եմ փեսային .  
Քո փեսայն է Յիսուս Փրկիչ .  
Սուգաստն է լուսոյ երկինք : »

« Ձօրացիր դու ջերմ հաւատով ,  
Թող քո մարմին շըղթայն պընդէ ,  
Հոգիդ ազատ վերաթեւէ ,  
Երթայ խառնի լոյս երամին : »

Սանդուխտ սանիկ ուրախացաւ ,  
Հոգին հըրճուեց ու զօրացաւ ,  
Թէ մօտ էր իւր հարսնութեան օր ,  
Խաւար բանտէն ելնել ի լոյս .

Երկնից խորան և հարսնետուն ,  
 Որ խօսեցեալն էր հաւատով ,  
 Եւ հարսնածուն էր Թաղէս :  
 Անդրանիկ կոյսըն մարտիրոս ,  
 Գլուխըն ծածկեց կարմիր քօղով ,  
 Որ 'տի լինէր խաչելոյն հարսն .  
 Եւ յի արիւն էր զարդարանք ,  
 Բոսորագեղ էր հանգերձանք :  
 Այլ երբ մըտաւ երկնուց դարպաս  
 Քօղն ի գըլխէն առին հրեշտակք ,  
 Կուսին երես փայլեց պայծառ .  
 Ինչպէս հովտին Շաւարչանայ ,  
 Ծաղկեալ շուշան սպիտակափայլ :  
 Որ Թագուհին էր տան Հայոց .  
 Սանդուխտ եղեւ երկնից դըշխոյ :

Թաղէն զըղթայն զայն համբուրեց ,  
 Եւ ինձ մընաց կուսին տապան ,  
 Ես գըրկեցի այն սուրբ շիրիմ .  
 Համբուրեցի լի անձկանօք :  
 Ասի ահա ուխտս իմ լըցաւ ,  
 Սիրտս ու հոգիս Թող մընայ աստ .  
 Ուխտեմ չ'մոռնալ մինչեւ ի մահ ,  
 Սուրբ Թաղէին Սանդուխտ կուսին .  
 Յաւէրժական այս յիշատակ :



## ԿԵԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ

ԻՐ ԾՆՆԴԵՆԷՆ ՄԻՆՁԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԵՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՇԻՇՄԱՆԵԱՆ

## Ը

Պաշտօն եւ Քարոզութիւն Սրբոյն Յովնաննու Կարապետի.

**Ե**րկու նախընթաց զլուխներուն մէջ խօսեցանք Յիսուսի մանուկ ու երիտասարդ կենցաղին վրայ՝ որ իր երեսնամեայ մեկուսացեալ կեանքը կը կազմէր: Հիմայ եկած հասած է ա՛լ ժամանակը. պէտք է որ երեսնայ Աստուծոյ Որդին, լսելի ընէ իր աստուածային ձայնը, յայտնուի, լուսաւորէ աշխարհքը, Այն որ տիեզերք մը ողջոյն հանեց խաւար անդունդէն և առաջին լոյսը փայլատակեց, կործանելով քառոր:

Բայց դեռ պատրաստուած չեն մեր միտքերը: Իր լոյսը կընայ շացնել մեր աչքերը. ուստի տեսնենք նախ իր Յառաջընթացը՝ որուն համար գրուած էր արդէն թէ Մեսիան, իրմէ առաջ, հրեշտականման Կարապետ մը պիտի ունենայ՝ որ պիտի պատրաստէ իրեն ճանապարհը: Այլ ժամանակին է որ Աստուած կատարէ իր խոստումը:

Երեք Աւետարանիչներ՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, կը խօսին Յօհաննու Կարապետին վրայ, կը սահմանեն անոր վսեմ Պաշտօնին կիրառման ժամանակը, կը պատմեն անոր կեանքը ու կը նկարագրեն անոր քարոզութիւնները: Ս. Ղուկաս Աւետարանիչ հետեւեալ կերպով կը պատմէ. — « Ի հնգետասներորդի ամի տէրութեան — կ'ըսէ — Տրեբրեայ կայսեր, ի գատաւորութեան Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ, և ի չորրորդապետութեան Գալլիլեացւոց Հերովդի, և ի Փիլիպպոսի եղբօր նորա չորրորդապետութեան Իտուրացւոց և Տրաքոնացւոց աշխարհին, (\*) և ի չորրորդապե-

(\*) Ինքուացի կը լուչուէին՝ Իսմայելի որդւոյն՝ Յեսուրի անունով, Մանասէի կէս ցեղի ժողովուրդները և կը բնակէին Պաղեստինի հիւսիսկողմը, իսկ Տրաքոնացիք՝ աւազակ ու մուլի մարդիկ էին և Ս. Երկրի հիւսիս — արեւելեան սահմանին վրայ, ապառաժուտ ու անհարթ վայրեր կը բնակէին:

տուութեան Լիւսանեայ Աբիլենացւոց, (\* ) և ի քահանայապետութեան Աննայի և Կայրափայ, եղև բան Աստուծոյ ի վերայ Յովնանու որդւոյ Չաքարեայ յանապատի անդ : Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց » (Ղու. Գլ. Գ. 1-2-3) :

Ինչու՞ համար սակայն այնչափ մանրամասնութեան կրմանէ Սրբազան Աւետարանիչը . — պատճառը յայտնի է . որպէս զի ճշգիւ ցոյց տայ այն ժամանակը՝ յորում Փրկիչը պիտի յայտնուի :

Ստոյգ է որ Յիսուսի ժողովրդական ու հրապարակական կեանքը իր մկրտութենէն կըսկսի, և սակայն այդ մկրտութիւնն ալ Յօաննու քարոզութեան ժամանակ կատարուած է, որմէ կըհետեւի թէ՛ նոյն քարոզութեան մասին եղած բոլոր պատմական ծանօթութիւնները կըսահմանեն միանգամայն այս ժամանակամիջոցը ու քաղաքական այն հանգամանքները՝ որ ատեն Յիսուս ձեռնարկեց իր պաշտօնին :

Արդ՝ համաձայն Աւետարանի ճշմարտութեան, Տիբեր կայսեր թագաւորութեան 15դ տարին էր որ Յօաննէս՝ իր երեսուն տարեկան հասակին մէջ կըցաւ իրենց համար նախաստիմանուած պաշտօնն ստանձնել, որովհետև, ըստ օրինի, ներեալ չէր որ և է Հրէի, 30 տարեկանէն առաջ քահանայական և կամ ասոր նման պաշտօն մը ստանձնել :

Նոյնպէս յայտնի կ'երեւի որ, այն ատենները ջնջուած էր Հրէից թագաւորութիւնը և Աստուծոյ ժողովուրդը Հռովմայեցւոց իշխանութեան ներքեւ կը հեծէր : Հիթանոսները տէր կըկանգնէին Ահարօնեան Աթոռին ու Գահանայապետական աստիճանին կըբարձրացնէին՝ ոչ թէ արժանաւորները՝ այլ ամէնէն ճարպիկ ու դաւանենդ մարդիկը՝ մանաւանդ այնպիսիներ՝ որ ամէնէն աւելի կաշառք կուտային այն պաշտօնին բարձնանալու համար : Եւ անա այսպիսի ապականեալ ժամանակի մը մէջ, քաղաքական այսպիսի հանդամանքներու տակ, Աստուած լսելի կ'ընէ իր ձայնը Չաքարիայի որդւոյն՝ Յօաննու :

ՅԱստուածակոյս էր Յօաննու պաշտօնն ալ, ու ժամանակը՝ խիստ յարմար, ըստ որում Հռովմէական կառավարութիւնը արգելք չեղաւ անոր պաշտօնին : Հռովմայեցիներն անտարբեր կըմնային հանդէպ կրօնապատկան խըն-

(\* ) Աբիլենացիք՝ բնակիչներն են Աբիլենայ գաւառին՝ որ Անդրլիբանանեան արեւելեան կողմը կ'ընայ : Այս գաւառը կըկոչուի նաև Աբիլինէ Լիւսանեայ :

զիրնհրու . անոնց միտքը ամբողջովին զբաւած էր միայն քաղաքականութիւնը , մինչդեռ ոչ Հերովդէս և ոչ Աբբեղայոս , երկուքն ալ կասկածոտ , նախանձոտ և անողոր մարդիկ , անշուշտ չի պիտի ներէին որ Յօճաննէս հրապարակաւ և յայտնի համարձակութեամբ քարոզէր զՅիսուս : Քարոզութեան հանդիսավայրն ալ իմաստութեամբ ընտրուած էր , — Անապատը՝ Քերրոնէն մինչև Երուսաղէմ լեռնոտ ու քարքարուտ ընդարձակ սասարէզ մը՝ որ կը համապատասխանէր՝ իր տխրութեամբը , չոր ու ցամաք երեւոյթովը և անայութեամբը , քարոզչին խտամբերութեանը՝ ապահովութեամբ անոր լեզուոյն անկախութիւնն ու ազատութիւնը . վասն զի՝ եթէ երբեք Երուսաղէմի մէջ քարոզէր , կրնար ամբաստանուիլ իբրև խռովաբար , իբրև վրդովիչ հանրային անդորրութեան , մինչդեռ Յուդայի անմշակ ու խոպան երկիրնհրուն մէջ , կամ , Յորդաննու մենիկ ու մնջիկ փոռնքներուն զբայ վախնալու բնաւ բան մը չունէր :

Արդ՝ այս անապատին մէջ էր որ Յօճաննէս լսելի ըրաւ իր ձայնը . սակայն մենք՝ լսելէ առաջ զինքը անսկենք թէ որպիսի ոք էր Յիսուսի այդ կանխագուշակուած կարապետը , թէ ի՞նչպէս պատրաստուեցաւ իր գերազոյն բայց գծուարին պաշտօնին և թէ որպիսի յաջողութեամբ կատարելագործեց զայն :

Յիսուսի կարապետին որպիսի ոք ըլլալը՝ արգէն երկնային պատգամը յայտնեց Հրեշտակին միջոցաւ Աստուծոյ Տաճարին մէջ՝ երբ աւետիս ընդունեց Չաքարիա՝ թէ իրմէն զաւակ մը պիտի ծնի՝ իր և իր կնոջը նոյն ծերութեան ժամանակ . և Հրեշտակը՝ իր տուած աւետիսին հետ արգէն կրթացատրէ այն զաւակին ով ըլլալը հետևեալ խօսքերուն մէջ . — « Կին քո Եղիսարեթ — կ'ըսէ Չաքարիային — ծնցի քեզ որդի , և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս : Եւ եղիցի քեզ ուրախութիւն և գնծութիւն , և բաղումք ի ծննդեան նորա ինդասցեն . զի եղիցի մեծ առաջի Տեառն , և դինս և օղի մի արբցէ , և Հոգւով սրբով լցցի անդասին յորովայնէ մօր իւրոյ , և գրազումս յորդուոցն Իսրայելի դարձուցցէ ի Տէր Աստուած իւրեանց : Եւ ինքն եկեացէ առաջի նորա հոգւով զօրութեամբ Ելիայի՝ զարձուցանել զսիրտս հարց յորդիս և զանհուանս յիմաստութիւն արգարոց » (Ղ. . Ա . 13 - 14 - 15 - 16 - 17) :

Ահաւասիկ թէ ով ոք էր Յիսուսի կարապետը : Աստուա-

ծային օրհնութեան զաւակն էր՝ որուն գրուատիբը երկնային Պատգամաբերին շրթունքներուն վրայ այնքան սքանչելի ու փառաւոր կերպով կը յայտնուին : Յօհաննէս է անուոր , այսինքն պարզեւ Աստուծոյ , կամ , ողորմութիւն Աստուծոյ , վասն զի Հրէից պիտի աւետարանէ աստուածային ողորմութեան ամէնէն հրաշալի գործը , այն է , աշխարհի փրկութիւնը Յիսուսիւ Քրիստոսիւ : Մեծ պիտի ըլլայ Աստուծոյ առջև , ոչ թէ սերնդական արեան ազնուութեանը համար՝ այլ աստուածային սքանչելիաց պատճառաւ յանձին անոր , մեծ՝ որովհետև անգատին իր մօրը որովայնէն Հոգւով սրբով լեցուեցաւ , մեծ իր խորին խոնարհութեամբը , մեծ՝ իր նախանձախնդրութիւնովը , մեծ՝ անընկճելի հաստատատութիւնովը , մեծ՝ իբրև կարապետ Մեսիայի , իր պաշտօնի բարձրութիւնովը , մեծ , վերջապէս , Յիսուսի տուած գովեստներովը՝ « մեծ ի ծնունդս կանանց » : Իր ծննդեան ժամանակ յայտնուած նշաններէն զգալի եղաւ թէ՛ աշխարհի մարդը չէր , այլ վիճակուած էր Տաճարին ծառայելու , թէպէտ Ղեւտացի մըն էր իր հայրը՝ Զաքարիա : Իր մանկութենէն միայնութիւն սիրեց : Անպատին մէջ միայն երեսուն տարի , ոչ թէ իբրև մեռակեաց , այլ հին մարգարէից պէս դէս ու դէն թափառելով ու լեռներու սնձաւները կամ մացառներն իրեն բնակալալը ընտրելով : Այդ մենութեան մէջ կ'ազօթէր անգագար , վասն զի աստուածային լուսով լուսաւորուած՝ դիտէր թէ բարձր պաշտօն մը ունէր՝ զոր պիտի կատարէր օր մը : Նա ինքն էր Մաղաքիայի նախատեսած անձը՝ որ Մեսիայի ճամբաները պիտի պատրաստէր , ինքն էր այն Զայնը՝ որ անպատը պիտի սարսեցնէր և զորդիս Իսրայելի պիտի հրաւիրէր ըստ Եսայեայ : Յօհաննէս գիտէր այս ամէնը :

Խստապարանոց և ապականեալ ժողովուրդի մը համար՝ խիստ ու լուրջ քարոզիչ մը պէտք էր , որ կարող ըլլար սարսափ ազդելու , արթնցնելու զայն իր թմբութենէն և ամօթաճար ընելու իր գործերուն նկատմամբ : Անձին օրինակովը և եթ պիտի կրնար իրենց ապականութենէն քաշել հանել և ապաշխարութեան հրաւիրել ժողովուրդ մը՝ որ այնքան անզգայ ու խուլ դարձան իրենց մարգարէներուն ձայներուն և ահա՛ այս պատճառաւ նախ իր անձը կ'ենթարկէ խիստ ապաշխարութեան : Իր մագերը երբեք ասելի չի տեսան , չի ճաշակից բնաւ ի բերոյ որթոյ , վայրի մեղքն ու մարախը իր մնունդն չէին և ճանդերձը՝ որ կիսով

չափ իր մերկու թիւնը կըծածկէր՝ ուղտի ստուռն էր՝ մաշկեղէն գօտիով մը ամփոփուած : Եկաւ ժամանակը , լսեց աստուածային Ձայնը ի ներքուստ , թողուց իր մինալայրը , մտաւ Երիբովի հովտին մէջ , իր երեւոյթը ամէն աչք իրեն գրաւեց , Եղիան էր , կարծես , որ հրեղէն կառքերով վեր՝ Երկինք պիտի վերանար : Իր յեղակարծ երեւումը , իր արտակարգ կերպարանքը , իր կեանքի խստամբերութիւնը , իր եռանդուն պերճախօսութիւնը , ի վեր քան զմարդարէն , մարդարէից գերագոյնի մը կատարեալ տիպն ու նմանութիւնը կ'արտայայտէին՝ որմէ սխալելով՝ ամէնքը կարծեցին թէ նոյն ինքն Թեղբացին էր : Ամէնքը իրեն կըղիմէին — « Երուսաղէմացիք և ամենայն Հրէաստան և ամենայն կողմն Յորդանանու » — և ասոնց ամէնուն ապաշխարութեան մկրտութիւնը կըքարոզէր — « Ասպաշարեցէք — կ'ըսէր — զի մ'ըձեալ է արքայութիւն Աստուծոյ » : Ամէնքը իրենց մեղքերը խոստովանելով կըմկրտուէին Յորդանան գետին մէջ :

Յօհաննու Մկրտութիւնը սրբազործութիւն մը չէս , մեղքերը չէր լուար , այլ արտաքին նշան մըն էր միայն հոգիներու մաքրութեան՝ զոր Յիսուս պիտի նուիրագործէր օծութեամբ Հոգւոյն Արքոյ :

Կըմկրտուէին Յօհաննէսէն « խոստովանեալ զմեզս իւրեանց » , ապացոյց մը թէ՛ մեղաց խոստովանութիւնը անհրաժեշտ պայման մըն էր մկրտութիւնն ընդունելու համար , ներքին զղձումը այդ գրաւականով կ'ապացուցուէր : Բայց բաւական էր միթէ ըսել թէ — « Ես մեղաւոր եմ » , — ոչ , անշուշտ : Ամենածանր մեղաց մանրամասն խոստովանութիւնը միայն՝ նշանն էր ճշմարիտ զղման :

Յօհաննէս բարեհամբոյր էր ամէնուն հանդէպ , խոնարհներն ու աղքատները կամաւ կըխոնարէին երկնային սոյն Առաքեալին առջև՝ որ ներող էր ամէնուն : Ան երբեք չէր պահանջեր որ՝ իրենց մեղքերը քաւելու համար , իրեն պէս խստամբեր ապաշխարութեան ենթարկէին իրենց անձը , այլ՝ բաւական կըհամարէր ըսել անոնց — « Ոյր իցեն երկու հանդերձք , սացէ զմին այնմ ոյր ոչ գուցէ , և ոյր կայցէ կերպ-

կուր՝նոյնպէս արասցէ» (Ղ.Ն. Գ. 11) :

Բարեհամրոյր էր նաև մաքսաւորներուն՝ որ միրտուելու գալով կընարցնէին — «Տէր , զի՞նչ գործեսցուք» : Մաքսաւորները շատ ասելի էին յաչս Հրէից իրենց կեղեքումներուն պատճառաւ՝ զորս ի գործ կըզնէին Հռովմէական Պետութեան կողմէ գրուած հարկերը հաւաքելու ասեննին : Յօճաննէս չ'ըսեր անոնց թէ՛ հրաժարին իրենց պաշտօնէն, այլ՝ կըպարտաւորեցնէր զանոնք՝ որ ժողովուրդը չի կեղեքեն — «Մի ինչ աւելի քան զհրամայեալսն ձեզ անոխցէք» :

Նոյն իսկ զինւորներ կու գային ու կընարցնէին — «Եւ միք զի՞նչ գործեսցուք» — ու Յօճաննէս ներողամիտ էր անոնց ալ — «Մի գոք խուիցէք — կ'ըսէր — և մի գոք զըրպարտիցէք , շատ լիցին ձեզ թոշակքն ձեր» :

Վերջապէս ուրիշ բան չէր պահանջեր Յօճաննէս , եթէ ոչ՝ խոնարհութիւն ու պարտանանաչութիւն , այն էր բովանդակ ապաշխարութիւնը՝ զոր կըզնէր իւրաքանչիւրին վրայ՝ որ կու գար սրտով զլջալու իր մեղքերը : Բայց յանկարծ կըփոխէր իր գիրքը երբ հպարտ ու շողոքորթ գպրաց ու փարիսեաց հանդէպ կըգտնուէր — «Մուռնդք իժից , ո՞ եցոյց ձեզ փախչել ի բարկութիւնէ Տեառն որ գալոյն է» , այս էր միայն անոնց ուղղած խօսքը , այսինքն , — «Եւ կըճանչնամ զձեզ — կ'ըսէր — ձեր կրօնքը կեղծաւորութիւն ու նենգութիւն է , դուք՝ ձեր վարդապետութեանց բոլոր թոյները կըթափէք , վասն զի կեղծ են , և ինձ կըդիմէք , մի միայն ժողովրդականութիւն կեղծելու համար , եթէ սուտ կըխօսիմ , հաստատեցէք ու ցոյց տուէք ինձ ձեր որ կրօնի վարդապետներ էք , ապաշխարութեան արժանի սրտուղները , ապա թէ ոչ — «Արարէք պտուղս արժանի ապաշխարութեան» : Արդէն ամբողջ Սինսկոկիան՝ որուն սպասաւորներն էք դուք , դէպ ի իր մօտալուստ կործանումը կըզիմէ — «Ամենայն ծառ որ ոչ անէ զպտուղ բարի՝ հատանի և ի հուր արկանի» — Օն , փութացէք . զի Դատաւորը որ պիտի գայ , անաւոր է , — «Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում , և սրբեցէ զկալ իւր , ժողովեացէ զցորեանն ի շաւմարանս իւր , և զյարգն այրեացէ անչէջ հրով» : Եւ սակայն այս սպառնալիքները օգուտ մը չ'ըրին , խոնար-

հեցան բայց չի հաւատացին, ուստի հեռացան Յորդանանէն ու քիչերը միայն մկրտուեցան (Ղ.Վ. Է. 30) :

Բայց ժողովուրդն առ հասարակ՝ Յօճաննու Մկրտչի արտասովոր կեանքէն յափշտակուած, կըճամոզուէր թէ՛ ոչ թէ միայն Եղիան չէր ան, այլ նոյն ինքն Քրիստոսն էր, որովհետեւ կըմկրատէր և՛ ըստ հանրային կարծեաց, մկրտելու պաշտօնը միայն Մեսիային վերապահուած էր: Ասկից յառաջ եկաւ այն հարցումը՝ զոր ուզղեցին իրեն Սանհէաւրինի պատգամաւորները — « Զիա՞րդ մկրտե՞ս եթէ գու չես Քրիստոս » (Յ.Վ. Գ.) որուն պատասխանեց Յօճաննէս խուռն բազմութեան առջև — « Ես մկրտեմ զձեզ ջրով, ի միջի ձերում կայ զոր գուքն ոչ գիտէք, որ զկնի իմ գալոցն է, որում չեմ արժանի՛ եթէ լուծից զխրացս կօշկաց նորս » (Յ.Վ. Ա. 26-27) այն պիտի մկրտէ զձեզ խակապէս՝ Հողով Սրբով ու հրով: Անոր մկրտութիւնը պիտի մաքրէ բոլոր հոգիները, ինչպէս կրակը՝ որ մտազնիւրը կըմաքրէ:

Ահա ասոնք են Յօճաննու քարոզութեան գլխաւոր պարզանքերը՝ որոնք հաւարարար կ'ամփոփուէին այս խօսքին մէջ — « Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից »:

Յօճաննու Մկրտչի օրինակը մեզ կըտրվեցնէ « Փախչիլ ի բարկութենէ որ գալոցն է », այն է Դատաստանի խտաութիւնէն, կըտրվեցնէ արժանաւոր պտուղների յառաջ բերել, այսինքն անկեղծ սէր ունենալ առ Աստուած, առ ընկերս, առ ազգաստ, խոնարհութեամբ և պարտաճանաչութեամբ, որպէսզի մեր հաւատարմութեան իրաւունքովը, բարի ցորեններ ըլլանք Աստուծոյ շտեմարանին մէջ՝ մեր մահուրնէն ետքը:



## Ք Ա Ր Ո Չ

(Խօսեցեալ ի Ե. Կիւրակիի գ'նի Վարդապետի (յ 9 Օգոստոսի 1896) յԱզգ. Եկեղեցւոյ Հայոց Մանչեսթրի :)

Որպէս Մովսէս բարձրացոյց զօճն յանապատին նոյնպէս բարձրանալ պարս է Որդոյ մարդոյ զի ամենայն ուր հաւասայ ի նա մի կորիցէ , այլ ընկալցի զկեանսն յաւիտեանականս : — Յովհաննու Գ. 14-15 :

**Հ**ին Կտակարանի մէջ կրպատմութի թէ երբ Որդիքն Իսրայէլի Եգիպտոսէն և Փարաւօնի բռնութիւնէն ազատուած լինելով քառասուն տարի անապատների մէջ կըթափառէին և Մովսիսի առաջնորդութեամբ կըճանապարհորդէին դէպ ի Աւետեաց երկիրն , մէկ անգամ այդ թափառաչըջիկ կեանքէն զզուած լինելով՝ սկսան զՄովսէս և զԱստուած բամբասել և ասին . « Ընդէ՞ր հաներ զմեզ յԵգիպտոսէ կոտորել զմեզ յանապատիս յայսմիկ , զի ոչ զոյ հաց և ոչ ջուր , և անձինք մեր սաղտկացեալ են ի սնտաի հացէս : » Բնական հացի փոխարէն Աստուած մանասայ զրկած էր զոր այժմ հեղնօրէն սնտաի հաց կըկոչէն . և թէպէտ այս դէպքէն մի երկու օրով յառաջ ջրոյ պակասութիւն կար , այլ Աստուած մի ուրիշ հրաշքով վէմէն ջուր հանեց նոցա համար : Սակայն և այնպէս երախտամոռաց ժողովուրդն կըտրտնջէ ընդդէմ Աստուծոյ և Մովսիսի և հայրոյական հեգնութեամբ կըցասուցանէ զԲարձրեալն , որ ի պատիժ այդ անօրէնութեան՝ ժողովրդեան մէջ օձ կըզրկէ բովանդակ Իսրայէլեան բանակն օձերով կըլեցնէ . դաշտերը լի օձ , ճանապարհներն լի օձ , ուր որ կերթան օձ կըտեսնեն՝ օձի կըզպչին , իրենց վրաններ ու առանձնարաններ մինչև անգամ այդ զազրելի և միանգամայն սոսկալի սողուններով լեցուած են որ չարաչար կոտորածներ յառաջ կըբերեն ժողովրդեան մէջ : Անխարաբար մեծ ու փոքր , այր և կին , հարուստ ու աղքատ , ծեր և երիտասարդ՝ կըջարդուին . երբեմն այս մին , երբեմն՝ այն մին . և աղէտալի ջարդը կըչարունակուի մինչև ժողովուրդի խելքը գլուխը կըզայ և կըդառնայ առ Մովսէս և կ'ասէ . « Մեղաք՝ զի խօսեցաք չար զՏեառնէ և զքէն . արդ կից յալօթս առ Տէր , և բարձցէ ի մէնջ զօձսդ : » ժողովրդեան զիզջ տեսնելով՝ բարեբարն Աստուած ուզեց պատուհասն դազրեցնել , բայց մի այն-

պիտի կերպիւ որպէս զի թէ իւրաքանչիւր անհատ Իսրայել-  
լացի զգայ իւր արած չարիք եւ Աստուծոյ ողորմութեան  
յարգը պիտնայ, եւ թէ միանգամայն մի մեծ նախատիպ օրի-  
նակ ցոյց տայ այն մեծ փրկութեան համար որ պիտի կա-  
տարուէր Քրիստոսի սուրբ խաչիւն : Ուստի կրպատուիրէ որ  
մի հատ պղնձեայ օձ շինուի եւ մի բարձր ձողի վերայ կախուի,  
եւ կընչամայէ օձահար եղողներին շտապել այդ պղնձեայ  
օձին նայիլ եւ այնու գանել իւրեանց փրկութիւն ի  
մահուանէ :

Այս աւուր Աւետարանի մէջ եղած Քրիստոսի ակնարկու-  
թիւն այդ դէպքին կրվերաբերի : « Որպէս Մովսէս բարձ-  
րացոյց զօձն յանապատին , նոյնպէս բարձրանալ պարտ է  
Որդւոյ Մարդոյ . զի ամենայն որ հաւատայ ի նա մի կորի-  
ցէ , այլ ընկալցի զկեանսն յաւիտեականս : » Ինչպէս Մով-  
սէս անապատին մէջ օձը բարձրացոյց եւ օձահար եղողներ  
նորա վերայ նայելով կրփրկուէին , նոյնպէս Քրիստոս Սաչի  
վերայ պիտի բարձրանայ , եւ խաւարասէր գազանէն խած-  
ուած եւ մեղօք թունաւորեալ որդիք Աշխարհայ կարեն յաւի-  
տեական դատապարտութենէն եւ կորուստէ ազատուիլ  
եթէ աչքերնին հաւատով բարձրացնեն դէպ ի այդ խաչն եւ  
նորա վերայ խաչուած Փրկիչն , եւ հաւատան թէ նովաւ պիտի  
գտնեն իրենց փրկութիւն ինչպէս օձահար Իսրայելացիք  
պղնձակերտ օձին հաւատով նայելով կըրժչկուէին : Եթէ այն  
ժամանակի տառապող Իսրայելացին մտածէր թէ այս պղնձէ  
օձին նայելով ինչպէս պիտի կարենամ իմ կեանքս ազատել,  
նա երբէք չպիտի գտնէր իւր առողջութիւն :

Ահաւասիկ Քրիստոսի խաչի փրկարար զօրութեան նշա-  
նակութիւն :

Իսրայելացւոց ազգի գործած յանցանքն եւ կրած պատիժն  
նոյնպէս յարմար օրինակ էր մարդկային համայն ազգի հո-  
գեւոր պրութեան : Իսրայելացիք մեղանչեցին ընդդէմաստուա-  
ծային օրինաց, եւ կենդանեաց ամենէն սոսկալին եւ թունա-  
ւորն կըզրկուի նոցա մէջ որ չարաչար կըհարուածէ զանօրէն  
ժողովուրդն , անխտրաբար որու որ կըհանդիպի թաւալկոր  
կըստակէ կտտամահ կ'առնէ : Նոյնպէս մարդկային ազգին  
նախածնօղք մեղանչեցին եւ իւրեանց հետ իւրեանց բոլոր  
սերունդն օձատիպ անտեսանելի վիշապի՝ այսինքն սատա-  
նայի գերութեան մատնուեցան , որ չարաչար հարուածեց  
եւ դեռ կըհարուածէ մարդկային ազգն՝ թունալից խածուած-

ներով սաստիկ վէճքեր կըզնէ Ագամայ որդւոց հողինւ-  
րու վերայ :

Սախայն ինչպէս Մովսէս « ձուլադրոշմ ձուլիւք » պղնձա-  
կերտ օձի բարձրանալս լն՝ օձէն հարուածեալ Իսրայէլացի-  
ներին առիթ ընծայեց որ հաւատով հային ի նա եւ փըր-  
կուին , նոյնպէս եւ Աստուծոյ անմատչելի կանխապիտու-  
թեամբ՝ Քրիստոս կախուեցաւ Խաչի վերայ , որպէս զի սա-  
տանայի գերութեան մէջ տառապող Ագամայ որդիք՝ իւ-  
րեանց ստացած վէճքերո լն յաւիտենական կորստեամբ կը ու-  
տամար չլինին , այլ հաւատով հային այդ Խաչին եւ նորս  
վերայ կախուած Փրկչին , եւ այնու ստանան իւրեանց հող-  
ւոյ կատարեալ առողջութիւն , կամ ինչպէս Յիսուս կ'ասէ  
Նիկողդիմոսին , « զի ամենայն որ հաւատայ ի նա մի կորիցէ  
այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս » :

Աշխարհիս նիւթապաշտ մարդն պիտի հեզնական քմծիծա-  
ղով ասէ , ի՛նչ շաղփաղփուեթիւն է այս առէնը . ի՛նչ Ագա-  
մայ անկումն , ի՛նչ սատանայի գերութիւն . ի՛նչ մեղաց  
զատապարտութիւն . Յիսուսի խաչին նայելով՝ ի՛նչպէս  
կարող է մարդ ինքզինքն զատապարտութիւնէ փրկիլ . պա-  
ռաւանց խօսքեր են . մանուկներին խարելու կըծառայեն  
եւ այլ այսպիսի խօսքեր : Ի ծնէ կոյր մարդոյն համար  
փոյթ չէ թէ իւր շրջապատող բնական եւ արուեստականի-  
րաց կերպարանք եւ դոյներ , կամ իւր իսկ հազած զդիտորի  
գոյներ ինչ տեսակ են . քանզի նա գոյնի զազափար չունի,  
եւ եթէ նմա նկարագրուի թէ ջրոյ փոշիացեալ կաթիլներն  
արեւու կամ լուսոյ առաջեւ ծիածանի գեղեցիկ եօթնար-  
փեան գոյներն յառաջ կըբերեն , նա երբէք չպիտի կարենայ  
մի պայծառ ըմբռնում ունենալ այդ մասին , եւ հետեւարար  
չի կրնար իրօք հաւատալ թէ ջուր եւ լոյս այդպիսի հրաշք  
յառաջ բերելու կարող են : Նոյնպէս աշխարհիս այն նիւ-  
թապաշտ անձն որ իւր հոգւոյն աչքեր ամուր փակեր է ,  
գրեթէ կուրացուցեր է , չի կրնար ըմբռնել , քանզի չի ու-  
զեր տեսնել իւր հոգւոյն անկեալ գրութիւն . այն անձին  
համար փրկութիւն ասուած բանը չկայ , նորա համար ոչ  
Քրիստոսի Խաչն փրկարար զօրութիւն ունի ոչ Մովսիսի  
օձադրոշմ ձողն : Բայց եթէ Իսրայէլացիք եւս նոյն յանգբու-  
թեամբ եւ թերահաւատութեամբ վարուէին , եւ Մովսիսին  
ասէին . « Ի՛նչպէս կարելի է որ այդ ձուլածոյ օձին նայելով  
բժշկուինք . ցիցի վերայ գրուած պղնձի կտորէ աւելի չէ ,

«նոյ ինչ օգուտ պիտի լինի,» արդեօք յայնժամ այդ խաչա-  
նիչ օձնի իւրեանց որբւէ օգուտ պիտի բերէ՞ր . ո՞չ ապաքէն  
ամէնքն եւս չարաչար կերպով պիտի կորսուէին :

Հաւատացէք, սիրեցեալք իմ ի Քրիստոս, որ աշխարհիս  
բոլոր գործառնութեանց, բոլոր դասակարգութեանց եւ  
ստիճանաց չտի ու կշիռն Քրիստոսի սուրբ խաչն է . այս  
կենաց բոլոր դժուարութեանց ամենաստոյգ լուծումն խաչի  
վերայ կըզոնենք : Ի զուր կ'աշխատինք աշխարհիս միայն  
արտաքին փայլ ու պայծառութիւն տեսնել, եւ ներքին  
խարխուլ ու փտած դրութեան վերայ աչք կըզոցենք,  
կուզենք մեր նիւթապաշտ կամաց համեմատ զմեզ երջանիկ  
անել, խաչի ճանապարհէն կըխորշինք եւ մեր քմաց համեմատ  
փախստեան ճանապարհ ու միջոց կ'ընտրենք, բայց աւա՛ղ  
որ աւելի մեծամեծ խորխորասների՝ եւս առաւել անլուծա-  
նելի դժուարութեանց մէջ կ'իյնանք :

Քրիստոսի Ս. Խաչն ու չարչարանք մեր մտաց վերայ կը-  
զբոյժեն մարդկային կենաց բուն էութիւնն . այս կեանքը  
թշուառութեամբ եւ դժուարութեամբ բոլորովին չըջապատ-  
ուած է . մենք ամէնքս գիտենք, ամէնքս եւս կընդու-  
նինք . միակ տարբերութիւնն այն է որ ոմանք կուզեն այդ  
չարիքներէ խոյս տալ՝ հարստութեան, բարձր աստիճանի,  
մտային կարողութեան եւ այլ այսպիսի նիւթական ճանա-  
պարհաւ, եւ երբեմն կ'ուզեն հաւատալ եւ ուրիշների հաւա-  
տացնել թէ իրենք երջանիկ են կամ երջանկութեան հասնե-  
լու մօտ են . միայն այսքան ստակ եւս կըպակասի, այսինչ  
կամ այն ինչ իշխանութիւն կամ պարսպայ կըպակասի որպէս  
զի իւրեանց երջանկութիւն կատարեալ լինի : Բայց չարա-  
չար կըսխալին . եւ երբէք չպիտի կարենան այդ միջոցաւ  
իւրեանց զգոհութեան ճարը գտնել կամ այդ ճանապարհաւ  
կատարեալ երանութեան հասնել : Գնացէք առ Սողոմոն  
իմաստուն եւ ի նմանէ իմացէք ասած իս ճշմարտութիւն :  
Սողոմոնի ամբողջ կիանքն ի ծննդենէ մինչեւ իւր մահուան  
օրն՝ ա Ռէն տեսակ բարիքներով օժտեալ էր, ի ներքոյ երկ-  
նից մարդոց սիրելի և ցանկալի ռեւէ մի բան չկար զոր նա չու-  
նենար, զոր նա վայելած չըլինէր . իմաստութեան մէջ  
նմանը չկար, իբրեւ թագաւոր իւր ժամանակակցաց մէջ  
ամենէն ահաւոր եւ նշանաւորը կըհամարուէր, իւր նիւ-  
թական հարստութիւնն անբաւ էր, նորա մեծագործու-  
թեանց բեկորներն իւր հայրենեաց մէջ այսօր իսկ զկնի

հազարաւոր տարիների, մեր հիացում և սքանչացում կը-  
գրգռեն . բարեկեցութեան և ուրախ կենցաղավարութեան  
համար ինչ որ իւր ժամանակի աշխարհն կարող էր ընձեռել՝  
առատօրէն իւր տրամադրութեան ներքոյ գրուած էր , և  
ինչ որ նմա հաճոյք կըպատճառէր՝ կարող էր վայելել . ու-  
տել խմելն , հազնուիլն , նորա ապարանքն , արքունիքն ,  
պարտէզներն , գանձն՝ մեր անսակէտով ոչինչ պակասու-  
թիւն չունէին : Այնքան մեծ էր նորա փառք և փարթամու-  
թիւն որ մինչեւ իսկ Տէրն մեր « վայրենի շուշանի » վերայ  
խօսելով՝ կ'ասէ « և ոչ Սողովմոն յամենայն ի փառան իւ-  
րում զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ , » որ է ասել թէ Սողո-  
մոնի փառքն մինչեւ Քրիստոսի ժամանակ աշխարհ եկող  
մարդոց մէջ ամենէն մեծ և ամենէն չքեղն էր : Սակայն և  
այնպէս Սողովմոն իւր վիճակէն գոհ չէր , Սողովմոն երջանիկ  
չէր , Սողովմոն տխուր էր և իւր սրտի վիշտերն ունէր , ան-  
տեսանելի օձի խածուածն իւր հոգին կըզալարէր և իւր  
բոլոր իմաստութեան , փառաց և ճոխութեան մէջ՝ իւր  
հոգւոյն վէրքեր բժշկելու ճար ու հնար չգտաւ . և երբ ի  
խոր ծերութիւն հասաւ՝ իւր անցեալ կենաց վերայ ակնար-  
կելով հոգւոց կրհանէ և կ'ողբայ . « Ունայնութիւն ունայ-  
նութեանց , ամենայն ինչ ընդունայն է » : Սողովմոնի բո-  
լոր կատարելութեանց և ճոխութեանց մէջ՝ մէկ բան կը-  
պակասէր . Քրիստոսի Խաչն , որպէս զի նման օձահար Խա-  
րայելացւոց հայէր ի նա և իւր հոգւոյն բժշկութիւն գտ-  
նէր . միայն այդ մէկ բանը Սողովմոն չունէր , և այդ էր ա-  
մենակարեւորն , առանց որոյ այլ ամենայն ինչ էր , ըստ խոս-  
տովանութեան իւրում , « ունայնութիւն ունայնութեանց : »  
Միայն Քրիստոսի սուրբ Խաչը լինէր Սողովմոնի առաջ և նորա  
վերայ կախուած աշխարհի Փրկիչը տեսնէր՝ նորա փրկազոր-  
ծութեան արդիւնքը վայելէր , նորա աստուածաշունչ վար-  
դապետութիւն լսէր , նորա հանդերձեալ կենաց յուսովը  
զօրանար . յայնժամ Սողովմոնի համար աշխարհս մի բոլո-  
րովին ուրիշ կերպարանք կ'ունենար , յայնժամ Սողովմոն  
պիտի տեսնէր ամէն բանի բուն արժէքն . յայնժամ պիտի  
տեսնէր որ աշխարհիս երեսին իրօք ունայնութիւն չկայ ,  
երբ ամէն բան խաչովը չափենք , երբ ամէն բան խաչի

իրեստ լն սեմնենք . յայնժամ պիտի լաւ ըմբռնէր թէ ինչ կընշանակէ մեծութիւն , հարստութիւն , գիտութիւն , յառաջդիմութիւն . նոյնպէս խոնարհութիւն , աղքատութիւն , հիւանդութիւն , վիշտ , ցաւ և ամենատեսակ թշուառութիւն :

Եթէ Սաչի իսկական զօրութիւն այսպէս ըմբռնելու լինինք , և յամենայն դէպս Սաչին հայելու յօժար լինինք , յայնժամ այս կենաց գաղտնիքն ևս պիտի քաջ գիտնանք , այս կենաց բոլոր պարագայից իրական նշանակութիւն , չափ ու սահման պիտի կարենանք տեսնել . յետ այնու Սողոմոնի իմաստութեան , հարստութեան և ճոխութեան կարօտ չենք մնար՝ երջանիկ լինելու համար , որովհետեւ ի ներքուստ հարստացած , երջանկացած կըլինիմք , յայնժամ մեր հոգւոյ վկայութեամբ կ'իմանամք ի՛նչ ասել է թէ՛ « Աւքայութիւնն Սատուծոյ ի ներքս ի ձեզ է : » Յայնժամ մեզ համար ոչ հարստութիւն և մարմնաւոր յաջողութիւն այնքան մեծ հրապոյր կ'ունենայ , ոչ թշուառութիւն և աշխարհային անյաջողութիւն այնքան ալետալի և կսկծալի կ'երեւի , Յուր Երանելւոյն պէս նոյնը պիտի լինինք հիւանդութեան , թշուառութեան և նեղութեան մէջ ինչ որ էինք առողջութեան , ճոխութեան և բարեկեցութեան մէջ , ամեն պարագայի մէջ և յամենայն ժամանակի մեր սիրտերն լցուած պիտի լինին երախտագրտական զգացումներով , և անդադար պիտի սիրայօժար մաղթեմք առ Բարձրեալն . « Փառք քեզ , Սատուած , փառք քեզ , յաղազս ամենայնի , Տէր , փառք քեզ : » Որում և մեք փառս տացուք այժմ և միշտ եւ յաւիտեանս . Ամէն :

## ԱՊԱՀԱՐՉԱՆ կամ ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Ի ԳԵՐ . ՏԵՐ ՄԱՄԲՐԵ ԵՊԻՍԿՈՊՈՍԵ ՄԱՐԿՈՍԵԱՆ

(Շարունակութեան , Տես էջ 318)

## Գ

## ԻՆՉ Է ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէութիւնն է կրօն կամ պաշտօն առ Աստուած Յիսուս Քրիստոսի ձեռքով հաստատուած , զոր հաւատքով և սիրով ընդունող և ճշտիւ կատարողները՝ կ'ըսուին Քրիստոնէայ , որոյ հաւաքական միութիւնը կըսուի Եկեղեցի , որ ժողով հաւատացելոց ըսել է :

Յիսուս հիմնեց քրիստոնէական Եկեղեցին իբր շինուած մը ամեն մասամբ կատարեալ , որուն նիւթերն են մարդիկ : Ապա Եկեղեցին գոյութիւն և յարստեութիւն ունենալու համար պարտական է հնազանդիլ Որդւոյն Աստուծոյ . ապա թէ ոչ միշտ Աստուծոյ բարկութեան ենթակայ կըմնայ : (Յ.Վ. Գ. 36 :)

Քրիստոնէութիւնը՝ անդամոյ կատարեալ յարմարութեամբ կազմուած մարմին մի է , որոյ գլուխը ինքն բանն Աստուած է , անդամները պարտական են զլիսոյն հետեւիլ , չը հետեւողը անկէ բաժնուած է : (Յ.Վ. ԺԵ. 6 :)

Քրիստոնէական ընկերութիւնը հոգեւոր թագաւորութիւն մի է , որոյ թագաւորը Աստուած է , Աստուծոյ թագաւորութեան հպատակները — քրիստոնեայք — պարտական են իրենց ամենակարող թագաւորին օրինաց հնազանդիլ . եթէ զեն հնազանդիր՝ Նորա հպատակ չեն :

Քրիստոս կըպահանջէ , որ իւր հիմնած Եկեղեցին իր վրայ հաստատուի , որ անշարժ մնայ . իւր անդամները ընտիր , մաքուր , անարատ և իրեն հետ միանալու արժանի լինին , իրեն հետ կապուին , որ իբձէ ընդունին սնունդ և կեանք . Քրիստոսին եղողը բոլորանուէր իրեն ընծայուելու է : Նա կըկամի , որ Աստուծոյ թագաւորութեան հպատակները նորա օրինաց հնազանդ , անոր մեծութենէն պատկառող ու ըստ պատշաճի պատուող լինին և իրեն սրբութեան արժանի կեանք ունենան , որ իւր թագաւորութեան խոստացած խաղաղութիւնն ու երանութիւնը վայելին : (Յ.Վ. ԺԲ. 25, 26 : ԺԳ. 15 : ԺԵ. 1-10 :

Քրիստոնէութիւնը Աստուծոյ որդիութիւն է Յիսուս Քրիստոսի միջոցաւ . որդիք պարտական են իրենց Հօրը նմանիլ . այս նմանութիւնը կը յաջողի Փրկչին պատուէրներուն կատարեալ հնազանդութեամբ . աննման և անհնազանդ որդիք՝ որդիութեան իրաւունքէն զրկուելով գուրս կը ձգուին :

Քրիստոնէութեան նշանաբանն է սուրբ Սէրը , որոյ պտուղն է վարուց սրբութիւն և բարուց ազնուութիւն , իրարու հետ խաղաղութիւն , համաձայնութիւն , համբերութիւն , ներողամտութիւն , գոհունակութիւն . մէկ խօսքով , բոլոր առաքինութիւնք են պտուղ սուրբ Սիրոյ . որ կը պաղարբի՝ քրիստոնէական օրէնքները Քրիստոսի նպատակին համեմատ մշակելով : Ասանկ կազմուած ընկերութեան մէջ անուանաշուքներէն անունն անգամ չը լսուիր , քրիստոնէին համար ապահարգանք անհասկանալի է , նա չէ կարող ըմբռնել թէ մարդ իւր կէսէն բաժնուելով՝ ի՞նչպէս կրնայ ընտանեկան խաղաղ կեանքը կամ կազմութիւնը ողջ մնալ :

Քրիստոնէութիւնը բոլոր ազգաց մէջէն զատուած՝ որոշուած՝ Աստուծոյ սեպհական ժողովուրդ , ընտիր ու սուրբ ազգութիւն ու քահանայութիւն մի է , որ իւր առաքինութիւնները իբրեւ ընդունելի սուրբ պատարագ նուիրէ Աստուծոյ , որ զինքը հեթանոսական խաւարէն և հրէական անկատարութիւնէն կանչեց՝ իւր աստուածային լուսոյն՝ և քրիստոնէական մարդավայել կատարելութեան , և կրխրատէ որ քրիստոնեայն հեթանոսական խաւարին դործիրէն հեռանայ . հողոյ դէմ մաքառող մարմնոյ ցանկութիւններէն մէկ գի կենայ . աշխարհի մէջ պանդուխտի և օտարականի պէս ապրի . պարկեշտ , արթուն , ժիր , արդար ու բարեպաշտ վարք ու կեանք ունենայ . բնաւ նախատանաց արժանի գործ չունենալով Քրիստոսի կատարելութեան նմանի :

Ահա այս է քրիստոնէութիւնը , որ իւր փառքը , պարծանքը և օգուտը միութեան մէջ կրփնառէ , ոչ թէ բաժանման մէջ . միութիւնը՝ սիրոյ պտուղ է , բաժանումը՝ ատելութեան . բայց ճշմարիտ քրիստոնեայն միայն սիրել գիտէ , ասել չը գիտեր . ապահարգանք ատելութեան վիժածն է :

## Դ

### Ո՞Վ Է ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

Թէպէտ նախորդ հատուածով քրիստոնէութիւնը բացատրելով՝ յայտնած եզանք նաեւ թէ ո՞վ է ճշմարիտ քրիստո-

նեախն , բայց աւելի լաւ պարզելու և առաջարկեալ խնդրոյն հետ ունեցած հակակրօթիւնը յայտնելու համար սոյն հատուածը զնեւ հարկ համարեցինք :

Նախորդ հատուածը կարդալով թերեւս մտքէ անցնի թէ, — Եթէ այդ է քրիստոնէութիւնը , ուրիմն քրիստոնեայ չըկայ — : Չենք կարող վճռել զայդ , այլ կըհաւատանք որ , թէ և սակաւաթիւ , ամեն ազգաց մէջ ալ ճշմարիտ քրիստոնեայնեւր կան , հարկ է որ լինին , եթէ չը լինէր՝ քրիստոնէութիւնը չէր կրնար մնալ :

Կան քրիստոնեայ կոչուած անհասաներ , ընտանիք , ալբեր , որք անխտիր կըգործեն ու կըխօսին հեթանոսական խաւար՝ ամենակերպ աղտոզի և մահաբեր գործեր ու խօսք՝ . . . . . : Թէեւ կրօնի արտաքին ձևերն ու պաշտամունքը միքինաբար կըկատարին : Կան որ իրենք զիրենք միայն քրիստոնեայ անուանելու և ուրիշները խօսելու մերժելու եւ անարգելու յաւակնութիւնն ունին , սակայն իրենք ալ այն խոսած ազգերէն աւելի բան մը չունին : Յայտնի է թէ սոքա քրիստոնեաներ չեն :

Կան անուշով շատ քրիստոնեաներ , որ խօսքով եւ գործով բուն հակառակորդներ են քրիստոնէութեան , որք յանուն կրօնի կըխօսին , բայց կրօնը չունին . յօգուտ Եկեղեցւոյ ազգին եւ մարդկութեան զինուած կըլիեղծեն , բայց իրօք ի նիստ կըխօսին ու կըգործեն . որք ինքնակոչ առաջնորդողի պաշտօն ըստանձնած՝ ճարտարութեամբ ձեւաւոր խօսքերու վարագոյրին տակ կըծածկին խաբէութիւնն ու նենգութիւնը : Մարդկան լսելեաց եւ կամաց հանելի եւ անոնց կիրքերը շոյելու յարմար բաներ կըխօսին . ( կենաց խօսքը կըթիւրեն , Աւետարանի սուրբ սէրը ախտաւոր եւ անպարկեշտ սիրոյ կըփոխեն . . . ) որով կըմոլորեցնեն շատերը . եւ քրիստոնէական մաքուր ու պարզ կեանքէն զայն թակղեցնելով՝ կըծգին զգայական անբան կրից ապականութեան մէջ : Ասոնք են որ քրիստոնէական ողջամիտ խրատները մտիկ չեն ընել . ճշմարտութիւնը ստել կամ գէթ սատրուակել կաշխատին , եւ իրենց ծուռ ու սխալ գաղափարները տարածելով ժողովրդեան մէջ՝ կըմերկացնեն զմտնք հաւատքէ , պարկեշտութենէ եւ սրբութենէ . կ'ապստամբեցնեն Աստուծոյ խօսքէն ու օրէնքէն եւ կըզրկուին ու իրենց հետ շատերը կըզրկեն հոգեւոր ու մարմնաւոր ճշմարիտ կեանքէ : ( Մատթ. Է. 21. Լե. 11 : )

Ապա՝ քրիստոնեայ միայն նա է , որ իւր քրիստոնէական

կոչման երկիւղածութեամբ հետեւելով՝ կատարելապէս կը հնազանդի Աստուծոյ . զինքը քրիստոնէութեան կանչող սուրբին պէս ինքն ալ սուրբ և արդար կեանք կ'ունենայ . հեզ , խոնարհ և հնազանդ կըլինի , իւր վերայ կարգուած օրինաւոր իշխանութիւնը , բարեբարները , ծնողքը , դաստիարակները , բոլոր մարդիկ՝ իրենց աստիճանին և վիճակին համեմատ կը պատուէ , կը մեծարէ , ամենուրեք հետ քաղցրութեամբ կը վարուի , չ'անուատուեր , չը հակառակիր , դաժանութիւն չըներ , շահու համար մոլութիւնը՝ զեղծումը չը ջատագովիր . յաղթասիրութեամբ կամակորութիւն ընելով այլոց պատիւը և սիրտը չը կոտորեր , խռովութիւն կամ կոխ չը հաներ . պատահած տեղն ալ շուտով հանգարտեցնել կը ջանայ , և Աստուծոյ սիրովը դամնննն ալ կը սիրէ :

Քրիստոնէին , ինչպէս նաեւ բոլոր մարդկութեան , ժանտախան է պղծութիւնը , բոլոր բարոյական և մարմնական ախտերու և հիւանդութեանց և տարածած մահերու սկզբնապատճառն է բղջախոհութիւնը . ճշմարիտ քրիստոնեայն զգուանօք և սարսափով կատէ բղջախոհութիւնը , հեշտախաւթութեան անպատու գործերէն , խօսքերէն և մինչև անգամ խորհուրդներէն սոսկումով կը փախչի . և եւէ գիպուածով տեսնէ կամ լսէ , ա՛ն ու դողով կը լեցուի և զգուանք կը գայ : Քրիստոնեան լուսոյ որդի է , խաւարի գործերը մահու չափ կատէ :

Փրկչի սիրոյ կրակովը առանկ տաքցած , զտուած , մաքրուած ու լուսաւորուած ընկերութեան մէջ սէրն ու ներողամտութիւնը կը կանոնաւորէ ամեն բան և կարգի կը բերէ , մանաւանդ թէ անկարգութիւն չը պատահեր , որ ծայրայեղ մեասակար դարմաններու գիմէ :

Առանկ ճշմարիտ քրիստոնեայք իրենց երկսեռ մանուկները Տիրոջ խրատով ու ուսմամբը , սիրով ու երկիւղիւր կը կրթին ու կը դաստիարակին . առանկ կրթուած մանչ և ալժիկ գիտն իրարու համակերպիլ և զիրար կտավարել : Առանկ կազմուած ընկերութեան մէջ ապահարզանի պատճառ չը գտնուիր . գաղափարն անգամ անձանթով կը լինի : Սուրբ կրօնի անարատ բարոյականին պակասութեան հետեւանքն է ապահարզանը :

Քրիստոնէական դաստիարակութեան ուղղութիւնէն չեղելը բարուց ապականութիւն յառաջ կը բերէ , ապականեալ բարքը կը խստացնէ սիրտը . դաժան , կամակար և անհնազանդ կընէ , անհնազանդութիւնը կրից ու հաճոյից չ'ապօրէն և

չուայ գոհացում կրպահանջէ . յորմէ կընտելին անանկ դէպ-  
քեր ու պատճառներ . . . որք ապահարզանը անհրաժեշտ  
կ'երեւցնեն՝ իբր չարեաց փոքրագոյնը , բայց իբրք՝ չարեաց  
ամենամեծն է . քանզի՝ ոչ միայն ընամենեաց կազմակեր-  
պութիւնը կըխանգարէ , այլ և պղծութիւնն ու ապականու-  
թիւնը կընդհանրացնէ , ապօրէն յարաբերութիւնները յա-  
ճախելու առիթ կըտայ . . . : (Ապահարզան ընդունող  
քրիստոնէայ ազգաց ներքին վիճակը մօտէն քննողները կրվկա-  
յեն : ) Անո ապահարզանի յառաջ բերած պտուղը : Քրիստոնէ-  
ութիւնն է միայն որ բարքերը կ'ազնուացնէ և այրն ու կինը ի-  
րենց մեծ պաշտօնին բարձրութեանը կըվերածէ : Ի՞նչ տկարու-  
թիւն . որ էականը , հաստատունը թողած՝ պատահականն  
ու լքածունը կըփնտռեն , յետադիմութիւնը իբր յաստաջա-  
դիմութիւն երեւցնել կ'ուզեն :

Արդէն ըսինք թէ — Զեղծում գեղծում կըծնանի . ինչպէս որ  
փորձով ալ միշտ կըտեսնուի , եթէ մէկ զեղծումը նախկին  
ուղղութեան չը վերածենք , անվերջ զեղծմանց կառաջնորդէ :  
Մարդիկ ինչու՞ զեռ չեն ուշաբերիր : և նախորդ զեղծում-  
ները ուղղելու տեղ՞ ուրիշ արգէն փորձն առնուած զեղծ-  
ման մը կըբռնեն իբր դարման , և կըջատագովեն իբր  
չառ լաւ բան :

Նորութեան սիրահարները տեսնելով եւրոպական ազգաց  
մէջ՝ յաջորդական զեղծումներէ յառաջ եկած անկոպար ազա-  
տութիւնը , լկտութիւնը , տոհմային պարկեշտութեան , հա-  
մեստութեան , ամօթխածութեան դէմ զինեցան . զրեցին ,  
ու վառ երեւակայութեամբ ճառեցին . վէպերով լրբութիւնը  
մշակեցին ու զարգայուցին : Այգանեցին , նախատեցին ամեն  
բարի սովորութիւն իբր կոշտութիւններ . թուք ու մուր  
տուին այն ամեն բանի՝ ինչ որ ազգային , սուրբ բարի և  
օգտակար էր . և յորդորեցին որ եւրոպական քաղաքակրթու-  
թեան հետեւին , առանց որոշ յայտնելու թէ ինչ է քաղա-  
քակրթութիւնը ըսածնին : Ի՞նչ եղաւ հետեւանքը — . Փո-  
խանակ սպասուած իրական լուծաւորութեան և աղնի-  
քաղաքակրթութեան՝ մտաւ անպարկեշտ համարձակութիւնը ,  
պչրանքը , զեղխութիւնը , շոայլութիւնը , երկու սեռին  
իրարու հետ համարձակ , առանձին , առանց զգուշաւոր  
հսկողութեան՝ անպատշաճ յարաբերութեանը , (արդէն ջա-  
տագո՛վներուն նպատակն ալ թերեւս այդ էր , որ իրենց  
անկարգ հաճոյից արձակ յագուրդ տան . ) և ահա , ինչպէս  
որ բնական էր , մոլութիւնը զարգացաւ , կորովը կամ այ-

րութիւնը տկարացաւ, կիրքերը արձակ համարձակ ամեն կերպ... ապօրէն յագուրդ գանկելով՝ օրինաւոր ամուսնութիւնք պակսեցան: Անկարութիւնք, ժամանակէ յառաջ ծերութիւնք յաճախեցին, ամուսնական սուրբ հաւատարմութեան հակառակ խոստմնադրութ անհաւատարմութիւնը ազատութիւն գտաւ. և ահա հեթանոսական և հրէական ապսխարգանք կրեցաւ, և իր լեզուանի ջատագոյններն ունեցաւ, որք ինչպէս եւրոպական խաւարած լուսաւորութիւնը և երեսէ ինկած քաղաքակրթութիւնը բազմեցուցին ազգին մէջ և զայն թշուառացուցին, նոյնպէս՝ այժմ ալ կրճգին ապահարզանի ապականութիւնն ալ փառօք բազմեցնել. — քրիստոնէութիւնը իր սուրբ, պատկառելի և վսեմ բարձրութենէն՝ հեթանոսական և հրէական խոստարտութեան պեղած կեղտոտ փոսին մէջ դահավիժել: Աւելի զարմանալին այս է, որ այս մոլութիւնն ու մոլորութիւնը կրօնապէս՝ օրէնքով՝ ի պաշտօնէ հաստատել և գործադրել տալ կրճգնին, հակառակ Քրիստոսի բացարձակ արգելքին և քրիստոնէական սիրոյ և սրբութեան:

Ապահարզան պահանջողները եթէ քրիստոնեայ են, պատաւոր են Քրիստոսի հնազանդիլ, որ բացարձակ կրօնը է ապահարզանը՝ ըսելով, Սկիզբէն անանկ չեղաւ. Աստուծոյ միացուցածը մարդ թող չը զատէ: Մարդ եթէ կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կընէ. արձակուած կինը եթէ ուրիշ էրիկ առնէ, շնութիւն կընէ: Ասկէ աւելի բացարձակ արգելելու խօսք չը լինիր. զոր Առաքեալն ալ կ'երկրորդէ: Պոռնկութեան պատճառաւ բաժնելու խօսք մը կայ՝ ոչ այնչափ բացարձակ (\*), բայց թէ՛ արձակողին և թէ՛ արձակուողին կրկին ամուսնանալու բնաւ երբէք խօսք չը կայ. տարբեր մեկնութիւն տալով՝ և օրինադրելով բաժնել և ամուսնայնել՝ բազմակնութիւն է, հակաքրիստոնէական

(\*) «Եւ ոչ վասն պոռնկութեան» խօսքերն արդարեւ ոմանք ի նախնեաց և յարդեաց բացատրած են իբրև պատճառ ամուսնուրածութեան, սակայն աւելի հմուտ մեկնաբանք իբրև Հրէից նախապաշարման հանդէպ եղած զիջողութիւն կընկատեն. և կ'նոյ ամուսնանալէ յառաջ գործած յանցանքին (որ է պոռնկութիւն, և ոչ թէ շնութիւն) կը վերագրեն: Բայց Նոր կտակաբանի երբայնախառն յուսական ոճին քաջ կը պատշաճի այն մեկնութիւն, զոր մեր թարգմանիչք ևս երեւի ի նկատի ունեցած են, թէ՛ եւ ոչ իսկ վասն պոռնկութեան ներքին է արձակել զկին կամ բաժանել զոր Աստուած զուգեաց: —

է, և քմահաճ յաւակնութիւնն է. իշխանութիւնը պարագայներն մանր քննելով եթէ պատշաճ դատի՛ մեծ դժուարութեամբ և տուգանօք կրնայ թոյլտուութիւն ընել, այն ալ հազուադէպ պարագայներու մէջ, բայց ոչ երբէք օրէնքով, այս թոյլտուութիւնն անգամ կըլինի արհամարհական և ոչ յարգելի: (\*)

Օրինաց այս խստութիւնը կարեւոր է, որպէս զի պատճառներ չը պատահին, և քրիստոնէական սրբութիւնը, ընտանեկան պատիւը անարատ պահուի: Այս օրէնքը որչափ գովուի ու պաշտպանուի, այնքան աւելի կ'արժէ, և այնքան աւելի օգտակար կըլինի:

Իսկ եթէ ապահարզան պահանջողները քրիստոնեայ չեն, ինչո՞ւ կ'աշխատին կըստիպեն որ քրիստոնէական Եկեղեցին իր օրէնսդիր Աստուծոյն հակառակ օրէնք սահմանէ: Ապահարզանը հակառակ է Աստուծոյ օրինաց, կամաց, և նպատակին. փոխանակ ապահարզան առաջարկելու աւելի օգտակար է անոր կարօտ չըլլալ սովրեցնել: Քրիստոնէական Եկեղեցին հնազանդ է Քրիստոսի. այս հնազանդութեամբն է Եկեղեցի, երբ անոր օրէնքին հակառակ օրէնք սահմանէ, օրէնսդիր կը լինի, և ոչ հպատակ. գլխոյն չը պատշաճող օտար մարմին մը և ոչ թէ Քրիստոսինը: Եկեղեցոյ անդամք, — քրիստոնեայք —, թող իրենց երկսեռ զաւակաց պարտքերը ճանչցնեն, թող քրիստոնէական օրէնքով դաստիարակեն, սուրբ սիրոյ, համբերութեան և հնազանդութեան մէջ կըլինեն. այն ատեն պիտի տեսնեն որ ապահարզանը իր կարեւորութիւնը կըկորսնցնէ: (\*\*)

(\*) Ինչ որ ալ լինի Մատ. (« Եւ ոչ վասն պոռնկութեան») թօսքերի մեկութիւն, տարակոյս չկայ որ մեր Եկեղեցին Ս. Պատարարողութեան մէջ ամուսնութիւնը որեւիցէ պատճառաւ կամ պատուակաւ լուծելու կարելիութիւն ցոյց չի տար: Ամուսնական ուխտն երբ միանգամ Ս. Պատարարչն օրհնութեամբ և իրազորութեամբ կատարուի՝ այլ ևս անլուծելի և անջնջելի է: Եկեղեցին կրնայ Ս. Պատարարչն օրհնութիւն միայն յայնժամ յետս կոչել, երբ կարելի լինի ապացուցանել թէ ամուսնութեան իսկական պայմանը կատարուած չէ, կամ կատարելու հնարաւորութիւն չկայ: — Ծան. Խմբ.

(\*\*\*) Ամուսնալուծութեան ջատագովք մեր Ազգի մէջ չգիտեն կամ կուզեն մեր ժողովուրդն համոզել թէ Եւրոպական ազգաց մէջ Եկեղեցին ամուսնութիւնը կըլուծէ ինչ ինչ պատճառներով: Ասկայն հարկ է որ մեր ժողովուրդ լաւ ըմբռնէ թէ ոչ կաթօլիկ եկեղեցին և ոչ բազմքականաց բամբիւ յարանուանութիւնք ընք

Ապրօէն յարաբերութիւնք զգայական հաճոյից գոհացում տալով արգելք եղան օրինաւոր ամուսնութեանց: Կնոջ նորասէր պչրանքը, փողոց և հրապարակ յաճախելը՝ մոռցուց անոր բուն պարտքերը, զազրեցաւ սնտեա, սնարար և սնաչէն լինելէ, արհամարհեց իւր տոհմական բարի յատկութիւններն ու սովորութիւնները. մերժեց իւր բուն՝ մեծ ու վսեմ պաշտօնը, — մայրութիւնը — . անձնատուր եղաւ փրօւեստական և անբարոյական դքսանքներու, պարահանդէսներու, թատրօններու, վէպերու և զգայական յօժարութեանց թելադրած դրաղումներու. և եղաւ թէ՛ ծնողաց և թէ՛ ամուսնոյն աւելորդ բեռ, օգտակար գործի անպէտ, մտահոգութիւն, տանջանք և անօգուտ ծանր ծախքերու պատճառ: Այս ամեն զեղծումներէն և անկարգութիւններէն ծնաւ և կարեւորութիւն ստացաւ դրամօժիտը, թջնամութիւնք եւ բաժանմունք ամեն օր տեսնուած լսուած բաներ են: Եւ ահա այս ալ ուրիշ մէկ պատճառ եղաւ ամուսնութեան պակսելուն:

(Շարունակելի:)

դունած չեն ամուսնալուծութիւն: Ինչպէս մեր Եկեղեցին նոյնպէս կաթօլիկ և բաղրքական Եկեղեցին Ս. Պատկի օրհնութիւնը միայն վերոյիշեալ պատճառաւ բացառաբար յետս կրկնէ, որ ամուսնալուծութիւն չէ բնաւ: Եւրօպիոյ այլ և այլ երկրաց մէջ ամուսնալուծութեան օրէնքն բոլորովին քաղաքական հաստատութիւն է և հակառակ է նոյն երկրաց մէջ աիբող Եկեղեցեաց օրինաց, և քաղաքական օրինօք ամուսնալուծեալ անձինք Եւրօպացւոց մէջ նոյնքան արհամարհ հանաց և ընկերային ստորնացման կ'ենթարկուին որքան մեր մէջ, և Եկեղեցւոյ կողմանէ ևս կերպիւ իմն լռելեայն եւ երբեմն յայտնապէս կրքանադրուին:

Ծան. Խմբ.

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ԼՕՆԴՕՆԵՆ

Հոգեշնորհ Տէր Հայր .

Հայ - Եկեղեցի պատուական հանդիսիդ Յունիս, Յուլիս և Յոստոս ամսաթիւերն կարդալու հաճոյքը վայելած ըլլալով, նոցա պարունակած ընտիր գրուածոց մէջէն սովորականէն աւելի ուշագորութիւն գրաւեցին բարձրաստիճան Հայ Եկեղեցականաց կուսակրօնութեան և ֆահանայից միամուսնութեան վրայօք գրուած ընդարձակ նամակներն դիտողագրերն ու Ձեր սրբութեան լուսամիտ բացատրութիւններն :

Այս ամենուն նպատակը ինչպէս գիտենք վերստին շեշտել և ուշագորութիւնը հրաւիրել է անշուշտ՝ մեր Սուրբ Եկեղեցւոյ Գերագոյն և Սրբազնագոյն Պետին ու բովանդակ ազգային եկեղեցական մարմնոյն, ի մասին դառերէ ի վեր անդալաբար մուտ գտած և հուսկ աւրեմն այսօր օրինական և կանոնական դարձած Եկեղեցական անհարազատ սովորութեանց :

Սակայն, բազմահմուտ հայր, որչափ որ հետաքրքրեցայ այս խնդրոյն ու կարելի եղածին չափ ալ դաղափար կազմեցի նորա բազմադիմի անպատեհութեանց, և ստուգիւ անհրաժեշտ բարեկարգութեանց հարկին վրայօք, իբրև մի պարզ աշխարհական ոմն, ոչ համարձակութիւն ունիմ կարծիք յայտնելու և ոչ ձեռնհասութիւն դիտողութիւն մը ուղղելու . միայն՝ եթէ կընեցուի ինձ պիտի յուսակնիմ մատնանշել մեր Սուրբ Եկեղեցւոյ բարեկարգութեան խափանարար արգելքներէն մի ուրիշը, որ գրեթէ բնաւ ուշագորութեան առնուած չէ մեր Եկեղեցական Սրբազան հարց կողմանէ, և յայտնի ալ չէ (դէթ ինձ համար) թէ որքան ժամանակէ ի վեր իբրև օրինական և կանոնական արգելք ճանաչուելով դժուարութեան մատնած է ֆահանայութեան սուրբ կոչման հետամտող բազմաթիւ արժանաւորագոյն անձանց բաղձանքը . որ եթէ չեմ սիւնել որ նուազ ադիտաբեր է քան ֆահանայից վերամուսնութեան արգելքը :

Այս արգելքը որ անտարակոյս թէ Ձեր Սրբութեան և թէ Եկեղեցականաց ու աշխարհականաց ընդհանուրին անծանօթ չէ, ձեռնադրութեան ներկայացող ֆահանայացուին՝ իւր անցեալ կեանքին մէջ վերամուսնութիւն ունեցած չ'ըլլալու պահանջումն է :

Արդ, Սուրբ Հայր, արդարև շատ կարեւոր են մեր բարձրաստիճան եկեղեցականաց կուսակրօնութեան և Քահանայից միամուսնութեան օրինական դարձած սովորոյթներու փոփոխմանց մասին հարկ ցուցուած տնօրէնութիւնք . բայց՝ արդեօք չ'արժեք որ վնասակարուութիւնն ըմբռնենք ու ճանչնանք նաև վերոյիշեալ անհետեւ արգելքին . որ կը զրկէ բազմութիւ արժանաւորադոյն անձեր Քահանայութեան ընտրելիութենէ, և որով կ'աւելնան արժանաւոր եկեղեցականներ ունենալու սեղմիչ արգելքներ ի վնաս ժողովրդային լուսաւորութեան և Սուրբ եկեղեցւոյ պայծառութեան:

Այո՛, Սուրբ Հայր, կարծեմ՝ կ'արժէ որ հաճիք կարեւորութիւնը ընդունել և խոնարհ գիտողութեանս թարգման հանդիսանալով աշխատել (որոց որ անկ է) ուշադրութեան արժանացնելու սոյն խնդիր . որպէս զի թերևս կարելի ըլլայ ստիպողական բացառիկ տնօրէնութեամբ մը բառնալ ի միջի այլոց գէթ այս քմածին և անխորհուրդ արգելքը . որով առաջին քայլը առնուած կ'ըլլայ դէպ ի բարեկարգութիւն:

Մատչելով ի համբոյր Ձեր Սուրբ աջոյն, Յնամ հարազատը մեր Սուրբ եկեղեցւոյն .

Լօնդօն 15 Հոկտեմբեր 1901 .

ԵՐՈՒԱՆԻ Յ ՍԻՍԱԿԵԱՆ

Սյալիսի պարագայից մէջ ընդհանրապէս ժողովրդեան նախապաշարուն է մեղադրելի, որով թաղայինք չեն համարձակիր եպիսկոպոսէն կամ Հայրապետեմասնաւոր արժանութիւն խնդրել՝ այլ ամենայն իւրի արժանաւոր՝ երկրորդ անգամ ամուսնացող երիտասարդաց համար, որք քահանայանալ կը յօժարին: Օրինակի համար, մեզ քաջ ծանօթ . . . քաղաքի մէջ կայրի մինչեւ ցայսօր պատուական երիտասարդ մի որ ի մանկութենէ եկեղեցւոյ նուիրեալ էր եւ բարեպաշտութեամբ եւ ջերմեռանդութեամբ լի էր . եկեղեցական երգեցմանց եւ արարողութեանց հմուտ էր եւ մեր այժմեան քահանայից մէջ բաւական բարձր տեղ կրնար բռնել իւր մտային կարողութեամբ եւ ուսմամբ: Իւր արթի մեծ բաղձանքն էր օր մի քահանայ ձեռնադրուիլ: Կանուխէն (22 տարեկան) ամուսնացաւ . բայց դժբաղձաբար նորա կին առաջին ծննդաբերութեան միջոցին մեռաւ: Երկու տարի վերջն յիշեալ այրիացեալ երիտասարդ կրկին ամուսնացաւ՝ գիտնալով որ այդու ինքզինքն կը զրկէ իւր արթի ամենաջերմ բաղձանքին հասնելէ: Ժողովուրդն ալ ցաւեցաւ որ մի դժբաղձութեամբ այդ արժանաւոր մարդու ծառայութենէ զրկուե-

ցաւ : Սակայն ոչ մէկու մտէն չանցաւ այս սխաւ իրողութիւնը տեղեկագրել մեր եկեղեցւոյ Սրբ. Կարողիկոսին եւ նորին Սրբութեան բացառիկ արժօնութիւնը խնդրել այս մասին , որ միշտ պատրաստ է ժողովրդեան արդար պահանջը կատարել :

Ծան. Խմբ.

### ՆԱՄԱԿ ԶՄԻՒՆԻԱՅԷՆ


Շնորհազարդ Տէր Հայր .

Կ. Պօլսոյ Մանգումիի Եփեսաւ լրագրոյն 63 թուոյն մէջ անստորագիր յօդուած մը կարդացինք , յորում Պ յօդուածագիրն հետեւեալը գրած է . « Ի սկզբան կաթողիկոսները կընտրուէին ու միայն կ'օրհնուէին : Իսկ Օծումը մտաւ այն օրը երբ ժողովուրդը եկեղեցիէն դուրս հովուելու հոգն ալ իրենք ստանձնեցին : Ապա թէ ոչ իբր հին և տիեզերական հայ եկեղեցի , Յունաց ընդհանուր Պատրիարքին պէս պաշտօնին աստիճանովը կը բարձրանային մեր կաթողիկոսները : »

Կըփափաքինք գիտնալ թէ՛ ո՞ր թուականին և ո՞ր կաթողիկոսէն կ'սկսի Օծման արարողութիւնը հայ. եկեղեցւոյ մէջ . և ո՞ր պատմադիրն յիշատակած է զայս :

Ներկայիս կը խնդրեմք որ բարեհաճիք Ձեր կրօնաթերթին միջոցաւ լուսաբանել զայս ի զոհացումն հետաքրքիր բանասիրաց :  
Զմիռնիա . 31 Օգոստոս 1901 . ՍԻՄԵՕՆ ՏԵՐ ԳԱՌՆԻԿԵԱՆ

Պատ . Խմբ . — Կ'առաջարկենք որ Ձեր հարցումն ուղղէք Մանգումիի Եփեսաւին և խնդրէք որ յայտնէ այն պատմագրաց անունները ( զի ուր էջ և այլն նշանակելով , կամ ամբողջ հատուածներն արտասպելով ) որոց վերայ կը հիմնէ իւր վճիռ , զոր մենք հաստատելու անկարող ենք և անպացուցանելի կը նկատենք : Այլոց վճիռներն , եւ ի մասնաւորի Կ. Պօլսոյ թերթերու ցումունքն , հաստատելու եւ ապացուցանելու պաշտօն ստանձնած չենք :




## ՄԱՏԻՆԱԽՕՍԱԿԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ, — Ծաղիաբաղ Գրիսոնեակիսն վար-  
դապետութեան և Եկեղեցական գիտելիքների . 4. Պոլիս 1901,  
Հրատարակութիւն Դաւթեան Գործակալութեան : Գրեմն է՝  
4 Դահեկան :

**Ն**ման Դաւթեան Գործակալութեան հրատարա-  
կեալ մի քանի ուրիշ դասագրոց զոր տեսած  
ենք, սոյն 127 էջերէ բաղկացեալ գրքոյիւ իւր համառոտ  
տուութեամբ, բազմակողմանի տեղեկութեամբ, և ամփոփ  
ու պարզ ոճովն, մի յոյժ պիտանի և ընտիր դասագիրք  
կրկազմէ : Մեծ հաճութեամբ աչքէ անցուցինք այս գրքի  
բոլոր գլուխներն և այն համոզումը գոյացուցինք որ, շատ  
քիչ բացառութեամբ, այն բոլոր յատկութիւններն ունի որ  
դասագրքի մը օգտակար լինելու համար անհրաժեշտ են :  
Մեր Ա. կրօնի, մեր Եկեղեցւոյ անցեալ պատմութեան և  
և ներկայ սահմանդրութեան բոլոր կարեւոր մասեր ժամա-  
նակագրական կարգաւ ամփոփուած են սոյն 127 էջերու  
մէջ : Հարկաւ մոռնալու չէ որ այս գիրքը առաջին անգամ  
կընրատարակուի, և հեղինակի, Պարոն Ա. Մանուկեանի,  
անդրանիկ երկասիրութիւնն է : Պարոն Ա. Մանուկեան Գէ-  
որգեան ձեռնարանի և Պետրսբուրգի համալսարանի ընթա-  
ցաւարտ է, և իւր այս երկասիրութեամբ ցոյց կուտայ որ  
իւր ուսումնական շրջան խնամքով և ուշիմութեամբ կա-  
տարած է : Ժամանակի փորձառութիւնը և սոյն դասա-  
գիրքը գործ ածող ուսուցչաց առաջարկութիւնք թիրեւս  
կարենան ապագային աւելի կատարեալ և նպատակայար-  
մար ընծայեցնել նորա յաջորդ տպագրութիւնն : Օրինակի  
համար մեր նախնեաց հեթանոսական կրօնի կարեւորու-  
թիւնը քրիստոնէութեան վերայ չափէ դուրս չեշտուած է :  
Մենք բնաւ պէտք զգացած չենք՝ «մեր եկեղեցիին քանի  
մը սովորութիւնները լաւ հասկնալու համար,» Հայոց հե-  
թանոսական կրօնքը ուսումնասիրել : Դէպ ի արեւելք ա-  
զօթելու սովորութենէն, «Արեգակն արգար», «Լոյս արա-  
րիչ լուսոյ» և այլ այսպիսի խօսքերէ հեռուցնել թէ Հայոց՝  
երկնային մարմիններու պաշտօն մատուցանելու սովորու-  
թիւնէն յառաջ եկած լինին այս ոճեր և սովորութիւն՝ նախ-

կին ընդհանուր Եկեղեցւոյ և Ս. Հարց մեկնութիւններն և նոյն իսկ մեր Փրկչի խօսքերն անգիտանալ կընշանակէ, որ կ'ասէ (Մատթ. ԻԴ. ն՛7.) « Զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից և երեւի մինչև յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ: » Յիշեալ ամբողջ գլուխը (Հայոց Հեթանոսական կրօնքը) որեւէ կերպիւ չի նպաստեր հայ մանուկին՝ իւր քրիստոնէական վարդապետութիւնը ուսանելու, այլ լոկ հետաքրքիր ընթերցուած մի է Ազգային պատմութեան և հնախօսութեան վերաբերեալ, և դասագրքիս սահմանէն դուրս կընկատեմք զայն:

Շատ կըցաւինք, և կրնանք գուշակել որ թէ հեղինակն և թէ հրատարակիչն ոչ ինչ նուազ կըցաւին, որ ստիպուած են այլ և այլ կարեւոր կէտեր և անուններ ի բաց թողուլ: Բայց և այնպէս բաւական ակնարկութիւններ կան որով իւրաքանչիւր հմուտ ուսուցիչ կրնայ առաջնորդուիլ այս ակամայ թերութիւններն բերանացի լցուցանել: Զերմայէս յանձնարարելով Մաղկաֆաղը մեր Ազգի մակաւոյն կրօնական դաստիարակութեան համար, Մեծարգոյ հեղինակին կար և զօրութիւն կըմաղթեմք որ յառաջ տանի իւր աշխատութիւնն Հայ. Եկեղեցւոյ անդաստանի մէջ, և կըբաղձամք որքան կարելի է շուտով տեսնալ գնա ի շարս հայ հոգեւորականաց, որով թէ ինքն (Պարոն Մանուկեան) աւելի արդիւնաւոր կերպով և աւելի բոլորանուէր պիտի կարենայ աշխատիլ իւր ընտրած ճիւղին մէջ, և թէ իւր աշխատութիւնն առաւել ևս պիտի գնահատուի հայ ժողովուրդէն, որ կը սիրէ իւր կրօնքն իւր կզերէն ուսանիլ:



## ՆԱՄԱԿ ՌՈՒՍՍՏՏԱՆԷՆ

(Մեր պատուական Ռուսաստանի բաժանորդաց ի միասնութիւն կրկնաստուակելով հետեւեալ գրութիւն գոր ստացած եւնք Թիբլիսի Գրականական Պաշտօնէութեանէն :)

Գերազատիւ Հայր Սուրբ .

Ձեր հրատարակած « Հայ. Եկեղեցի » կրօնաթերթը անխափան թոյլ է տրվում մուտք գործելու Ռուսաստանի սահմանը, և Ձեր բաժանորդներն անարգել ստանում են իր ժամանակին, վասն զի ցենզուրական կոմիտէն ցայժմ արգելած չէ նորա մուտքը Ռուսաստանում :

Մնամ յարգանք, խոնարհ ծառայ,  
Թիբլիս, Յուլիս 16 1901. Ա. ԳԻՇՄԻՇԵԱՆ.

---

## Ա Ձ Դ

Կրօնաթերթիս անցեալ տարուայ թիւերն այլ ևս բաժանորդագրութեան պայմանաւ չեն ծախուեր. այլ Ա. թ. թիւերն միասին կը վաճառուին՝ անկազմ 4 Շիլինգի (5 Ֆրանքի). գեղեցիկ կանաչագոյն լաթակազմով՝ ոսկեգօծեալ վերնագրով 5 Շիլինգի (6 Ֆրանքի):

Յետայսու նոր բաժանորդագրութիւն կընդունուի միայն ներկայ տարւոյս Յունուարէն կամ Յուլիսէն:

